ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հոկտեմբերի 2011թ. **N --- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1.Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Կիևյան փողոցի հ.8/4 շենքի հ.21՝ 14.0քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 23.06.2011թ. հ.2727828 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սիլվա Առուստամյանին և Տիգրան Առուստամյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սիլվա Առուստամյանին և իր որդուն՝ Տիգրան Առուստամյանին Երևանի քաղաքապետի 29.02.2008թ. հ.864-Ա որոշմամբ անհատույց մասնավորեցվել է Կիևյան փողոցի 8ա շենքի հ.43 բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.03.2008թ. հ.2246933 վկայական)։

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության 02.04.2007թ-ի հ.194 ուղեգրով Սիլվա Առուստամյանին և Տիգրան Առուստամյանին տրամադրվել է Կիևյան փողոցի հ.8 հանրակացարանային շենքի հ.21 սենյակը, որի նկատմամբ 2008թ.-ին դեռևս համայնքի անվամբ պետական գրանցում կատարված չի եղել։

Քանի որ Կիևյան փողոցի հ.8 հանրակացարանային շենքի հ.21 սենյակը Երևան համայնքի անվամբ պետական գրանցում է ստացել 23.06.2011թ.-ին՝ Կիևյան փողոցի հ.8/4 շենքի հ.21 հասցեով (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 23.06.2011թ. հ.2727828 վկայական), իսկ Սիլվա Առուստամյանը և Տիգրան Առուստամյանը Երևանի քաղաքապետի 29.02.2008թ. հ.864-Ա որոշմամբ արդեն իսկ մասնակցել են բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցմանը, ուստի Երևան համայնքի սեփականություն համարվող նշված բնակարանը Սիլվա Առուստամյանի և Տիգրան Առուստամյանի անվամբ կարող է մասնավորեցվել Երևան քաղաքի ավագանու թույլտվությամբ։

Սիլվա Առուստամյանը և Տիգրան Առուստամյանը փաստացի բնակվում են Կիևյան փողոցի հ.8/4 շենքի հ.21 հասցեում։

Ելնելով վերոգրյալից նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշման նախագիծ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ